ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1199-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿՈՆՑԵՍԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության, «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության և «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության միջև 2008 թվականի փետրվարի 13-ին կնքված կոնցեսիոն պայմանագրի անբաժանելի մաս կազմող և 2014 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված N 3 համաձայնագրի 2-2.1.2-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանը՝ ընդունել «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) (ՀՎՀՀ՝ 00448268) սեփականության իրավունքով պատկանող ՈՒԱՋ-390945 և ՈՒԱՋ-390995 մակնիշի 75 499 998 (յոթանասունհինգ միլիոն չորս հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ ընդհանուր արժողությամբ 12 միավոր ավտոտրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գույքն ընդունելու նպատակով մեկամսյա ժամկետում ընկերության հետ կնքել նվիրատվության պայմանագիր, դրանում նախատեսելով, որ պայմանագրի կնքման, գույքի պետական գրանցման և հաշվառման հետ կապված ծախսերն իրականացվելու են ընկերության միջոցների հաշվին.

2) ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքները սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքն ամրացված է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ այն կոնցեսիոն ակտիվների կազմում ներառելու և 2008 թվականի փետրվարի 13-ին «Ռուսական երկաթուղի» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետության երկաթուղային համակարգի փոխանցման կոնցեսիոն պայմանագրի շրջանակում կոնցեսիոն պարտավորությունների կատարման համար ընկերության տիրապետմանն ու օգտագործմանը փոխանցելու նպատակով:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքները՝ սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

28.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ